ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

Հայտնում եմ Ձեզ, որ «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲ ընկերության (ՀՎՀՀ՝ 01505563) և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի միջև 2021 թվականի մարտի 31-ին կնքված անշարժ գույքի ենթավարձակալության պայմանագրի ժամկետը՝ համաձայն վերջինիս, լրանում է սույն թվականի մարտի 5-ին: Հաշվի առնելով նշվածը՝ խնդրում եմ ՀՀ, քաղաք Երևան, Ա. Արմենակյան փողոց, թիվ 129/5 հասցեում գտնվող անշարժ գույքի տարածքն ազատել մինչև սույն թվականի մարտի 31-ը՝ պահպանելով վերոնշյալ պայմանագրով սահմանված պայմանները:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲ ընկերության և «ԷՆԵՐԳՈ ՄԱՐ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 01569416) միջև կնքված վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը լրանում է սույն թվականի ապրիլի 1-ին, ուստի սույն թվականի մարտի 31-ից հետո ենթավարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու հնարավորություն առկա չէ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ԷՆԵՐԳԱՑԱՆՑՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ՝

Լ. ՄԱՐԳԱՐՅԱՆ